Խաղաղություն օվկիանոսին այն խաղաղ,
Որ իսկապե՛ս լինի հանգիստ ու խաղաղ:
Խաղաղություն բոլո՞ր նրանց, ում համար
Ծանր է տեսնել սգավոր կին, քույր ու մայր,
Ծանր է տեսնել իր քաղաքը մոխրացած,
Այգին դարձած խրամատի անել ցանց...

Խաղաղությո՞ւն: Ո՞վ է կռիվ կամենում,—
Լոկ այս հարցն է, որ հնչում է ամենուր:

Պատասխանը միևնույնն է ամեն տեղ.
—Ո՛չ,—ասում է ամեն երկիր, ամեն ցեղ:

—Ո՛չ,—հնչում է ամեն լեզվով՝ մի բառով:
—Ո՛չ,—հնչում է կերտող մուրճի բարբառով:
Այգին ջրող բահը նույնն է պահանջում,
Նույնն է տենչում զուլալ հոսող ամեն ջուր,
Նույնն է ճչում ամեն մանուկ նորածին,
Նույնն է ասում լուռ հպումը սիրածի...

Խաղաղություն ամենքի՞ն և ամենո՛ւր,—
Ողջ աշխարհն է ողջ աշխարհին կամենում:

1949

ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ
(Սվերդլովսկ)

ԱՊՐԻԼ

Հայ մարդու հոգում, հիշողության մեջ
Այս վերքը բերդ է դարձել անառիկ.
Ոչ մի ուրիշ թիվ, ուրիշ վերք ու վեհ
Չի կարող ջնջել թիվը՝ տասնհինգ...
Իսկ ես, ես՝ ծնված երեսունհինգին,
Ես մի ռուս մանչուկ՝ հեռվում մեծացած,
Սոսկ հիմա հասան իմ ջահել ունկին
Այս բոթ-բառերը՝ «եղեռն, կոտորած»...
Գնդակը՝ պայթած տասնհինգ թվին,
Սոսկ հիմա խոցեց սիրտս անապակ.
Անե՛ծք, բյուր անե՛ծք դահճին այն վայրագ,
Անեծք՝ անվանը, անեծք՝ աճյունին...
Իսկ Հայաստանը, նա ապրո՛ւմ է, կա՛
Իսկ Հայաստանը՝ պատանու մի սիրտ.
Բիրտ ուժը արդեն անուժ է հիմա,
Սիրուց են ծնվում մանուկները միշտ:

Բայց հայի հոգում խոր գծվում է դեռ
Սուրբ Կոմիտասի խաչակիր ուղին,
Գծվում է, ձգվում սերունդների դեմ,
Որ քայլեն զգաստ, որ քայլեն ուղիղ,
Որ կյանքով հաղթեն դավին ու մահվան,
Որ երկրպագեն արարիչ լույսին...
...Հին խաչքարերը ծերերի նման
Հանդարտ պատմում են հավերժի մասին...
Իսկ եթե նորի՛ց թռչուններն այստեղ
Թևածեն ահից ենթգ տարաժամին,
Ու նորից իջնի աղետ մի ահեղ
Իմ նո՞ր, նո՞ր գտած իմ Հայաստանին,—
Երդվում եմ, վկա այս հողը արդար,
Ես ել կդառնամ զինվորը նրա,
Ու թե հարկ լինի՝ կընկնեմ իր համար
Իր տաք, վիրավոր քարերի վրա...

Թարգմանությունը՝ **Սիլվա Կապուտիկյանի**